ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK"S REGION
GYUMRI MEDICAL CENTER
CJSC

Հայաստանի Հանրապետություն
Գյումրի, Գ.Նժդեհի փ., 3/3
Էլ/հասցե՝ gyumrimc@gmail.com
Հեռ. - (0312) 3-03-11

Republic of Armenia
Gyumri st.G.Nzhdeh 3/3
E-mail: gyumrimc@gmail.com
Phone: (0312) 3-03-11

N 0548 « 23 » ապրիլ 2024թ.

«Լինարե մեդ» ՍՊԸ տնօրեն
Արթուր Շեգունցին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի պարոն Շեգունց

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն «Լինարե մեդ» ՍՊԸ-ի հետ 11.03.2024 թվականին կնքել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով քիմիական նյութերի ձեռքբերման պայմանագիր: Ֆինանսական միջոցներ նախատեսվելուն պես 14.03.2024 թվականին կնքվել է համաձայնագիր 1-ը՝ ապրանք պատվիրելու համար: Համաձայն կնքված պայմանագրի 8.3 կետի այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության 17.04.2024 թվականի Ե/907-24 գրության համաձայն «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն լուծարում է 11.03.2024 թվականին կնքված ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով պայմանագիրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել: Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարել է պայմանագրի ապահովման և որակավորման ապահովման գումարները «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 1510019952250100 հաշվեհամարին , ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին:
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումն ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Կից ներկայացվում է ՀՀ պետական վերահսկողության ծառայության կողմից ներկայացված գրությունը:

Առդիր՝ 1 էջ

Հարգանքով՝

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ

Տնօրեն Ա. Ռ. Իսահակյան